ԻՆՉՈ՞Ի ԱՍՏՎԱԾ ՉԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԻՄ ԱՂՈԹՔՆԵՐԻՆ

Հարցեր, որոնցով կուզեք դիմել Աստծուն - Մաս 3

«Ես քեզ աղաղակում եմ, բայց դու ինձ չես պատասխանում, կանգնում եմ, բայց դու ինձ ուշադրություն չես դարձնում:» Հոբ 30:20

1. Աստված ունի աղոթքները պատասխանելու երեք ձև

«Կանչի՛ր ինձ, և ես քեզ կպատասխանեմ...» Երեմիա 33:3

- Երբեմն ասում է "Այո"
- Երբեմն ասում է "Սպասիր"
- Երբեմն ասում է "Ոչ"

Օրինակներ Ծննդոց 17:18-29 (Աբրահամ), երկրորդ Օրինաց 3:23-28 (Մովսես), Բ Թագավորաց 12:16-20 (Դավիթ)

2. Երեք պատճառներ, երբ Աստված կարող է ասել "Ոչ"

- Երբ Աստված ունի ավելի մեծ հեռանկար

«Նրա առաջ անտեսանելի արարած չկա, այլ ամեն բան հստակ է և ակնհայտ.» Եբրայեցիս 4:13

«Որպեսզի պահպանի արդարության շավիղները. նա է պահում հավատավորների ճանապարհը:» Առակաց 2:8

Պողոսը փորձում էր գնալ Ասիա (Գործք Առաքելոց 16:6-8)

- Երբ Աստված ունի ավելի լավ ծրագիր

«Արդարև, իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհներն իմ ճանապարհները չեն,- ասում է Տերը: Այլ ...իմ ճանապարհները բարձր են ձեր ճանապարհներից...» Եսայիա 55:8-9

«Եվ սրանք բոլորը հավատով վկայություն ստացան, բայց խոստումը չստացան: Աստված մեզ համար ավելի լավ բաներ էր նախատեսել, որպեսզի դրանք առանց մեզ չկատարվեն:» Եբրայեցիս 11:39-40

Պողոսը փափագում էր քարոզել Հռոմում
(Հռովմայեցիս 11:15, 15:22-24, Գործք Առաքելոց 28:16)

- Երբ Աստված ունի ավելի մեծ նպատակ

«...իմ խորհուրդը պիտի իրականանա, և անում եմ այն ամենը, ինչ որ ինձ հաճելի է:» Եսայիա 46:10ա

«Դրա համար չենք վհատվում...մեր այժմյան թեթև նեղությունը գերազանց հավիտենական փառք է պատրաստում մեզ համար, քանի որ այս տեսանելի բաներին չենք նայում, այլ անտեսանելիներին, որովհետև տեսանելի բաները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական:» Բ Կորնթացիս 4:16-18

Պողոսը աղոթում էր, որ բուժվեր (Բ Կորնթացիս 12:7-10)

3. Ի՞նչ պետք է հիշել, երբ Աստված ասում է "Ոչ"

- Ամեն, ինչ որ Աստված անում է, անում է սիրուց դրդված

«Բայց գիտենք, որ ամեն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն...» Հռովմայեցիս 8:28

- Աստված միշտ մեզ շնորհք է տալիս, երբ ասում է "Ոչ"

«Երեք անգամ Տիրոջն աղաչեցի, որ նրան ինձանից հեռացնի: Իսկ նա ինձ ասաց. «Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում»: Բ Կորնթացիս 12:7-9

Իմ արձագանքը

- Դիմադրել Աստծուն
- Վրդովվել Աստծուց
- Հանգստանալ և ուրախանալ

Հաջորդ Քարոզի Թեման:

ԻՆՉՊԵ՞Ս ԻՄԱՆԱՄ,
ԹԵ ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է ԻՄ ՀԵՏ

Հովիվ Սարօ Խաչիկեան